ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 722-Ա/2 11.06.2020թ

ԱՐՏՈ ՉԱՔՄԱՔՉՅԱՆԻ «ՔԱՅԼՈՂ ՄԱՐԴԸ» ՔԱՆԴԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի N 834-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակի պատրաստման և տեղադրման աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» «12002. Աջակցություն քանդակների, արձանների պատրաստման, տեղադրման և վերականգնման աշխատանքներին» միջոցառման շրջանակում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից հատկացնել 37080.0 հազար (երեսունյոթ միլիոն ութսուն հազար) դրամ՝ 2020 թվականին Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակի պատրաստման և տեղադրման ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխա-

վոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ն. Խաչատուրյանին:

Նախարար Ա. Հարությունյան

X

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

----- ---------- 2020 թ.

N ------- հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակի պատրաստման և տեղադրման աշխատանքների

1. **Կազմակերպության անվանումը**

«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ

2. **Ծրագրի անցկացման վայրը**

Ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

3. **Անցկացման ժամկետը**

2020 թվական, սեպտեմբերի 30

4. **Ծրագիրը**

4.1 . Բովանդակությունը

Ժամանակակից արվեստի նմուշների ստեղծման, քանդակների պատրաստման, տեղադրման, մասնավորապես՝ համաշխարհային հռչակ ունեցող հայազգի քանդակագործ Արտո Չաքմաքչյանի արվեստի հանրահռչակման, իր երկրում պատշաճ արժևորման, Երևանի մշակութային դիմագծի հարստացման, այնպես էլ հայկական խաչքարագործության հարուստ արվեստի նմուշը՝ Ատոմ Վերակացուի խաչքարի կրկնօրինակը, արտերկրում ներկայացնելու և մեր մշակութային արժեքների տարածման և հանրահռչակման հանգամանքով:

Դեռևս 2000-ականների սկզբին քադակագործին խոստացել էին վերոնշյալ ստեղծագործությունը տեղադրել Հյուսիսային պողոտայում, բայց դրժել էին խոստումը: Դրանից առաջ խորհրդային տարիներին, «Մերգելյան ինստիտուտ»-ի այգում տեղադրված նրա

«Կոմիտաս» քանդակը գետնին հավասարեցվեց, որից հետո 1948 թ. Եգիպտոսից հայրենիք ներգաղթած Արտո Չաքմաքչյանը 1975 թ. հեռացավ հայրենիքից՝ մեկնելով Կանադա, որտեղ նա ամենահայտնի հայն էր և շարունակում է մնալ այդպիսին: Արվեստագետը իր մահկանացուն կնքեց 2019 թ. հոկտեմբերի 1-ին: Այսօր Արտո Չաքմաքչյանի ստեղծագործությունները զարդարում են աշխարհի տարբեր քաղաքների հրապարակները և թանգարանները:

4.2. Ծրագրի նպատակը

Ազգային մոդեռնիզմի բացառիկ նմուշի՝ «Քայլող մարդը» ստեղծագործության տեղադրումը Երևանում կարևորվում է մի քանի հանգամանքով.

1. Արդարության վերականգնում մեծ Արվեստագետի նկատմամբ,
2. «Քայլող մարդը» հեղափոխության խորհրդանիշն է,
3. «Քայլող մարդը» շարժումի՝ քայլ անելու պատգամ է,
4. Ժամանակակից արվեստի այս նմուշը կփոխի վերջին տարիներին Երևանում ձևավորված ցածրաճաշակ, անարժեք և անարվեստ քանդակային մշակույթի մթնոլորտը և նոր շունչ կհաղորդի քաղաքային միջավայրին:

4.3. Ակնկալվող արդյունքը

Հայազգի անվանի քանդակագործ Արտո Չաքմաքչյանի «Քայլող մարդը» քանդակի տեղադրում Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի Աբովյան փողոցին հարող տարածքում:

5. Ոչ ֆինանսական ցուցանիշներ

Ազգային մոդեռնիզմի բացառիկ նմուշ՝ 1 քանդակ